Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ԾՆՈՂԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ես, լսո՞ւմ եք, հարուստ չեմ, ամենևին ոչ: Այնպես, առանձնապես ոչինչ: Պարզապես ապրում եմ սեփական տանս: Եվ ի՞նչ մի բան է մեզ մոտ, անկեղծ ասած, սեփական տունը: Գլխացավանք: Բայց ծնողական երջանկությունը, կարող եմ պարծենալ, ինձ տրված է ավելի շռայլորեն, քան Կասրիլովկայի ամենամեծ հարուստին: Եվ երբ, լսո՞ւմ եք, տոն է լինում, և շուրջս են հավաքվում բոլոր զավակներս, աչքով չտամ, որդիներս ու դուստրերս, հարսներս ու փեսաներս, բոլոր թոռներս, ո՞վ կարող է ինձ հավասարվել:

Զորօրինակ վերցնենք պուրիմի ընթրիքը:

Ի՞նչ համ կունենա, ձեզ եմ հարցնում, այդ ընթրիքը, եթե կնոջդ հետ մեն ու մենակ սեղան եք նստում և ուտում:

Դե, պատկերացրեք, որ ես արդեն ճաշակել եմ և՛ ձուկ, և միս, և՛ այս, և՛ այն, հետո՞ ինչ: Գրոշ չարժե այդ տեսակ բավականությունը: Ձին, ներեցեք համեմատության, նույնպես ուտում է: Բայց մարդը ձի չէ, մանավանդ այնպիսի մարդը, ինչպիսին ե՛ս եմ, և մանավանդ տոն օրով, և մանավանդ այնպիսի՛ տոն, ինչպիսին պուրիմն է՝ իր ընթրիքի սեղանով:

Նախ և առաջ, աչքով չտամ, պատմեմ զավակներիս մասին:

Տասներկուսն ունեի, բայց չորսը, թող աստված մնացյալների կյանքն ու արևը երկար անի, վախճանվեցին, մնացին ութը, և բոլորն էլ, աստված նրանց առողջություն տա, կարգված են: Դրանց հալալ կեսը տղա է, կեսը՝ աղջիկ. չորս փեսա, չորս հարս. ահա և դուք կունենաք, աչքով չտամ, ոչ ավելի ոչ պակաս՝ տասնվեց:

Հապա թոռնե՛րս, աստված նրանց երկար կյանք տա:

Որ տրտնջամ, մեղք գործած կլինեմ — բոլոր աղջիկներս և բոլոր հարսներս, փառք աստծո, ամեն տարի ծնում են. մեկը տասնմեկն ունի, մեկը ինը, մյուսը՝ յոթը: Չբեր, այսինքն՝ այնպիսին, որ, աստված փրկի, ազատի, երեխա չունենա, մեզ մոտ գոյություն չունի:

Ճիշտ է, տղաներիցս մեկը, համենայն դեպս, ինձ մի քիչ չարչարանք պատճառեց, հարսս երկար ժամանակ երեխա չէր ունենում — չկա ու չկա:

Պատմություն սկսվեց. բժիշկներ, ռեբե, և թող ներվի, որ կողքին եմ հիշում, հեքիմ. ոչինչ չի օգնում:

Կարճ ասած, մնացել էր մի բան — բաժանվել:

Դե լավ, բաժանվել, թող լինի՝ բաժանվել: Հենց որ բանը հասավ դրան, ի՜նչ բաժանվել, ի՜նչ ֆլան, ի՜նչ ֆստան: Կինը չի ուզում:

Ոնց թե՝ չի ուզում: Նա ինձ, ասում է տղաս, սիրում է: Սարսաղի մեկը, ասում եմ տղայիս, ի՞նչ օգուտ ունես դրանից, որ քեզ սիրում է: Իսկ նա, թե՝ ես էլ իրեն եմ սիրում: Ի՞նչ կասեք այդ խելքի տոպրակին: Ես նրան ասում եմ՝ «Երկուսդ էլ խոխա եք», իսկ նա պատասխանում է՝ «Սիրում եմ»... Ձեզ ո՞նց է դուր գալիս այս խելառը:

Կարճ ասած, չբաժանվեցին: Եվ աստված օգնեց, արդեն վեց տարի է, ինչ հարսս սկսել է ծնել, տարի չկա, որ չբերի, տեղ ու դադար չկա թոռներիս ձեռքից:

Հապա մի թոռներիս տեսնեի՜ք, բոլորը սիրուն, բոլորը նախշուն, մեկը մյուսից լավը, նայելուց չեք կշտանա: Հավատացե՛ք, պատկեր են, պատկեր:

Հապա նրանց սովորե՞լը: Ցանկանում եք թալմուդից մի երես, համեցեք, թալմուդից մի երես՝ բերանացի: Հնգեմատյանի մասին՝ իր բոլոր մեկնություններով, մարգարեներով քերականությունով և հիմիկվա ամեն տեսակի ային-օյինով միասին վերցրած, որ խոսել անգամ չարժե: Իսկ թե ինչպե՜ս են կարդում, ինչպե՜ս են գրում՝ և՛ հրեերեն, և՛ ռուսերեն, և՛ գերմաներեն, և՛ ֆրանսերեն, և՛... և՛... և՛...

Երբ ինձ հարկավոր է լինում պատահած ժամանակ մի նամակ կարդալ, մի հասցե գրել կամ թե մի ուրիշ բան, կռիվ է սկսվում. «Պապի՛կ, ինձ տուր: Պապի՛կ, ինձ տուր»:

Դե, ինչ: Դուք թերևս հարցնեք, թե եկամուտի կողմից ո՞նց եք: Դատարկ բան է, կա արարիչն աստված, հենց նա էլ կարգադրում է — մեկ օր՝ այսպես, մեկ օր՝ այնպես, երբեմն լա՛վ, երբեմն վա՛տ: Պատկերացրեք, ավելի շատ վատ, քան թե լավ. տանջվում ես, տրորվում, կլոր տարին մի կերպ յոլա գնում. դե, իհարկե, ինչ ասել կուզի, միայն թե առողջություն լինի. դուք ի՞նչ կասեք:

Իմ ավագ որդու գործերը վատ չէին գնում: Ապրում էր գյուղում՝ Զլոդեևկայում, բավականին կարգին եկամուտ ուներ, բայց երբ մայիսի երեքի հրամանը եղավ, նրան քաղաքավարությամբ առաջարկեցին այնտեղից հեռանալ, նա էլ հասկանում եք էլի, սկսեց ջանք ու եռանդ թափել ու ապացուցել, որ ինքը «վերաբնակիչ» չէ, թղթեր ձեռք բերեց, որ ապրում է այնտեղ աշխարհի արարչության օրից և տվեց սենատին: Կարճ ասած, ոչ մի լաց ու շիվան չօգնեց, վռնդեցին, և մինչև այսօր ուշքը գլուխը չի գալիս... Ապրում է ինձ մոտ՝ հանդերձ ընտանյոք: Ուրիշ ի՞նչ պիտի աներ:

Երկրորդ որդուս բախտը պարզապես չի բերում, ինչ գործի որ կպչում է, բան չի դուրս գալիս, ոնց որ ասում են, ամեն ինչ գլուխկոնծի է տալիս: Ցորեն է առնում, գինն է ընկնում, անասուն է ծախում, կոտորվում են, ձեռքը գցում է անտառին, տաք ձմեռ է անում: Խոսք չկա, շա՛տ հաջողակն է: Գետի մեջ որ նայի, ձկները կսատկեն... Ես էլ միտք արեցի, միտք ու նրան ասացի. «Գիտես ինչ: Բողչեքդ կապիր ու կնկանդ ու երեխեքիդ հետ տեղափոխվիր ինձ մոտ: Մեծ քաջություն պետք չէ»:

Երրորդ որդիս, ճիշտն ասած, վատ չէր ապրում, բայց մեծ հրդեհի ժամանակ, աստված չանի, որ այդպիսի հրդեհ մեկ էլ պատահի, այրվեց, ու դուրս փախավ ինչով ծնվել էր մորից. դա հերիք չէր, դեռ անախորժություններն էլ ետևից հասան. ամբաստանագիր, քննիչ, հետո էլ զորակոչ... ո՜ր մեկն ասեմ: Մի հարցնեք, շա՞տ զվարճալի էր... Հիմա ապրում է ինձ մոտ իր ճժով ու պժով: Հապա ո՞նց...

Միայն կրտսեր որդուս վիճակն է, որ, աչքով չտամ, այնքան էլ վատ չէ: Այսինքն՝ ինչպես հասկանալ — «վատ չէ»: Նա փող չունի, բայց դրա փոխարեն ունի հարուստ աներ: Չէ թե հարուստ, որ ասենք կարգին եկամուտ ունի կամ թե լուրջ գործեր է ձեռնարկում, չէ՛, նա սոսկալի խարդախ է և գործամոլ: Ամեն անգամ կարուսել կֆռռացնի և չի հանգստանա, մինչև որ թե՛ իրեն, թե՛ ուրիշներին փորձանքի մեջ չգցի: Բայց ի՞նչ կասես, որ ինքը՝ շուն շանորդին, դուրս է պրծնում: Արդեն մի անգամ չէ, որ քամուն է տալիս և՛ իր, և՛ երեխեքի փողերը: Ես նրան ասում եմ. «Ի՞նչ եք քաշում տղայիս փողերը»: Նա ասում է. «Իսկ այդ փողերի մեջ ձեր բաժինը շա՞տ է»: Ես ասում եմ. «Իմ որդին, իմ հարազատ զավակն է»: Նա ասում է. «Իսկ իմ աղջիկը իմ զավակը չէ՞»: Ես ասում եմ. «Թո՛ւ»: Նա ասում է՝ «Փո՛ւ»: Ես ասում եմ՝ «Դե լավ, բավական է»: Նա ասում է՝ «Հերի՛ք է»: Խոսք-խոսքի ետևից: Ես էլ կրտսեր որդուս կանչում եմ ինձ մոտ և ասում. «Թքի՛ր քո այդ հարուստ ու խաբեբա աներոջ երեսին և արի ինձ մոտ, աստված ինչ որ կտա, յոլա կգնանք, միայն թե միասին լինենք...»:

Բայց ա՛յ, փեսաներիս կողմից, բախտ չկա: Չկա ու չկա: Այսինքն՝ կշտամբելու տեղ չունեն, ես, աստված հեռու տանի, չեմ զզվում նրանցից, որովհետև իմ փեսաները, ասածիս կարող եք հավատալ, այնպիսի փեսաներ են, ինչպիսիք ամենահարուստ մարդն էլ անգամ չունի: Գլխո՜վ, լավ ընտանիքի՜ց, երևելի՜ անձինք... Մի փեսաս նշանավոր տոհմից է, հրա՜շք է, ոսկի մարդ է, իսկ

ընդունակությունն՞ը՝ զուտ բարեմասնություններ: Դրան ավելացրեք նաև, որ թալմուդի լավ գիտակ է, միշտ կտեսնես սուրբ գրքի առջև նստած: Հենց հարսանիքի օրվանից էլ ինձ մոտ եմ պահում, որովհետև, եթե դուք նրան ճանաչելիս լինեիք, դուք ինքներդ էլ կասեիք, որ մեծ հանցանք կլիներ այդ տեսակ մարդուն տնից դուրս թողնելը. հանկարծ որ մի բան պատահի՞...

Իմ երկրորդ փեսան այնքան էլ փայլուն տոհմից չէ, բայց հազվագյուտ լավ մարդ է: Դե, էլ ինչ եք ուզում, կասեք: Ե՛վ գրում է, և՛ կարդում, և՛ հաշվում, և՛ երգում, և՛ պարում, և՛ ինչ ասես որ ձեռքից չի գալիս: Հապա շախմատ խաղա՛լը, խոսք չկա, ամեն ինչում գերազանց է: Այնուհանդերձ, լսո՞ւմ եք, եթե մի որևէ բան ձեզ չի վիճակված... Ինչպես ասում է Սողոմոն թագավորը — հաց ոչ է վասն իմաստնոյ, այսինքն՝ գիտուն մարդիկ կոշիկ չունեն: Ես նրան ամեն բանում էլ փորձեցի, եղավ և՛ վարձակալ, և՛ խանութպան, և՛ մելամեդ, և՛ քավոր, բան դուրս չեկավ, կուզես ճաքիր, տրաքվիր: Հիմա ընտանիքն առած ապրում է ինձ մոտ. դե հո աղջկաս փողոց չե՞մ շպրտի:

Մի փեսա էլ ունեմ, ճիշտ է, նրանց նման ուսյալ չէ, բայց և նրանցից էլ չէ, որ ամեն քայլափոխում հանդիպես: Ուսերի վրա մի հրաշալի գլո՛ւխ ունի, ձեռագիրը՝ սքանչելի, թալմուդագետ, իսկ թե ի՞նչ ճարտար լեզու ունի, ամեն մի բառը մի-մի մարգարիտ է, լսելուց չես կշտանում:

Միայն մի թերություն ունի. շատ նազուկ է, ոնց որ անմարմին ոգի լինի, հասկանո՞ւմ եք, այնքան էլ առողջություն չունի, այսինքն, նրան նայելիս, թվում է, իսկի ոչ մի ցավ էլ չունի... Ոչի՛նչ: Մենակ մի բան է վատ. քրտնում է, դեռ հազն էլ մյուս կողմից: Վերջին ժամանակներս նրա մոտ մի անտանելի կլանչոցով գարշելի հազ է լույս ընկել, դժվարությամբ է շունչը ետ բերում: Բժիշկները խորհուրդ են տալիս կաթ խմել և ամառանոց գնալ՝ Բոյբերիկ: Ասում են, այնտեղ են գնում բոլոր հիվանդները: Այնտեղ մի այնպիսի անտառ կա, ասում են, որ հազը բուժում է: Ահա ես էլ միտք եմ անում, որ եթե աստծու կամքով ողջ մնացինք, հաջորդ ամռանը գնանք Բոյբերիկ: Եվ հիմա, քանի դեռ հիվանդությունը վրան է, կնկա ու երեխեքի հետ, ինչպես կարգն է, նստած է վզիս: Ո՞նց կհրաժարվես:

Եվ մի փեսա էլ ունեմ, սա արդեն շատ հասարակ, բայց աշխատող տղա է, այսինքն՝ արհեստավոր չէ, աստված փրկի ազատի, ոչ դերձակ է, ոչ էլ կոշկակար, բայց գրագետներից էլ չէ:

Նա ձկնավաճառ է, ձուկ է ծախում, նրա հայրը ձուկ է ծախում, նրա պապը ձուկ է ծախել, նրանց ամբողջ գերդաստանը ձկնից բացի բան չգիտի, ձուկ, ձուկ, հա՛ ձուկ:

Ի միջի այլոց, նրանք բավականին կարգին մարդիկ են, ազնիվ են, բայց հասարակ են:

Դուք կհարցնեք, որտեղի՞ց է հայտնվել մի այդպիսի փեսա: Դե, իհարկե, այդ էլ իր պատմությունն ունի, ինչպես ասում են, գետը ի՞նչ տեսակ ձուկ ասես, որ չի բերում, երևի աղջկաս ճակատին այդ էր գրված, որ այդպիսի ամուսին ունենար:

Դե, այսինքն՝ այդ փեսայիս պախարակելու բան չունեմ, աղջիկս նրա հետ շատ երջանիկ է ապրում, որովհետև փեսաս լավ բնավորություն ունի, իսկական, բնածին ալմաստ է, հոգով ու սրտով կապված է բոլորիս հետ: Ինչ որ վաստակում է, կնոջն է տալիս և ուժը ներածին չափ օգնում է մյուս փեսաներիս ու հենց տղաներիս էլ: Ի՞նչ ասեմ, նա համարյա ամբողջովին մեզ համար է աշխատում և ամենքիս հետ էլ վերաբերվում է խորին հարգանքով, որովհետև շատ լավ գիտի, զգո՛ւմ է, հասկանում, թե ո՛վ ենք մենք, և թե ո՛վ է ինքը: Նա, նա՛ է, իսկ մենք, այդ մե՛նք ենք: Եվ այդպես հեշտ ու հանգիստ, լսո՞ւմ եք, չե՛ս ազատվի:

Ձեզանից թաքցնեմ, աստծուց ինչ թաքցնեմ, երբ պատահած ժամանակ մեզ մոտ հյուրեր են գալիս, և զավակներ զրույց են սկսում մի որևէ գերիմաստուն բանից, «Շուլխոն-օրուխի»[1] որևէ օրենքից կամ թե պարզապես աստվածաշնչի որևէ առակից, խեղճը ստիպված է լինում բերանը ջուր առնել ու նստել, որովհետև այդ ամենը նրա համար, ձեզ համար ասված չլինի, մութ անտառ է:

---

[1] Շուլխոն-օրուխ — օրենքների, հրահանգների և ծեսերի ժողովածու, որ կարգավորում է հավատացյալ հրեաների ամենօրյա կենցաղը:

Դե ինչ խոսք, որ նա պե՛տք է հպարտանա իր այդպիսի յուրայիններով և պե՛տք է աշխատի նրանց համար: Ի՞նչ կասեք: Մի՞թե այդպես չէ: Հը՞:

Հիմա, երբ արդեն մի քիչ ծանոթացաք իմ գերդաստանի հետ, դուք ինքներդ էլ կհասկանաք, թե ինչպիսի՜ ուրախություն է լինում ինձ մոտ և հոգուս մեջ ինչպիսի՜ հրճվանք, երբ գալիս է, ասենք, պուրիմի տոնը, երբ բոլոր զավակներս, բոլոր թոռներս, աչքով չտամ, հավաքվում են ընթրիքի ու շարվում սեղանի շուրջը, երբ ես օրհնում եմ զաֆրանով համեմած, չամիչները մեջը խրված, մեծ ու զարդարուն տոնական կալաչը[2], դրան հետևում է մի թեթև շաքարած, պղպեղած, ծովաբողկով սարքած հռչակավոր ձուկը, ապա արգանակով ախորժելի դեղնավուն, երկարուկ արիշտան, և բոլորը մի քիչ ճաշակում են այն ըմպելիքից, որը, իհարկե, աստված ուղարկած է լինում, ասենք մի շիշ սառեցրած իսկական սերբական գինի, ինչպես նաև մի-մի թաս բալի ընտիր թրմօղի, եթե, իհարկե, ճարվի, իսկ եթե ոչ, մի կում հասարակ օղի էլ թեկուզ լինի, այդ էլ բան է: Եվ հետո բոլորս միասին որ չե՞նք սկսում երգել: Ես ծոր եմ տալիս. «Վա՛ղը Հակոբայ», և մի անգամ էլ «Վա՛ղը Հակոբայ»: Եվ էլի նորից «Վա՛ղը Հակոբայ»: Իսկ երեխեքը, որ չե՞ն ձայնակցում՝

Ցնծո՛ւմ ենք և ուրախանո՛ւմ...

Իսկ պստլիկ չարաճճիները՝ թոռներս էլ իրենց բարակ ձայներով ձիգ են տալիս: Դեռ հալա պարում էլ ենք, և այդ ժամանակ ո՞վ կհասնի ինձ: Ո՞վ է Բրոդսկին իմ դիմաց: Ո՞վ է Ռոտշիլդը: Ես թագավո՛ր եմ, երդվում եմ պատվովս, թագավո՛ր:

Ես, լսո՞ւմ եք, հարուստ չեմ, բայց ծնողական ուրախությունները ինձ տրված են ավելի շռայլորեն, քան հենց Կասրիլովկայի ամենամեծ հարուստին:

[2] Կալաչ — սպիտակ, մեջը ծակ հաց: